# Անառիկ Անի. հայ ոգու, հավատի եւ տաղանդի քաղաքը

## Անին Բագրատունյաց թագավորության մայրաքաղաք հռչակելու 1050-ամյակին նվիրված հանդիսություն

ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում երեկ մեկնարկեց Անին Բագրատունյաց թագավորության մայրաքաղաք հռչակելու 1050-ամյակին նվիրված հոբելյանական ծրագիրը:

Կատարելով հանդիսության արարողության բացումը, ՀՀ ԳԱԱ նախագահ, հոբելյանական հանձնաժողովի նախագահ, ակադեմիկոս **Ռադիկ Մարտիրոսյանը** ասաց, որ այդ ակտը տեղի է ունեցել ճիշտ օգոստոսի 26-ին: Հաշվի առնելով երեւույթի կարեւորությունը, Հայաստանի կառավարությունը հոբելյանի կապակցությամբ ստեղծել է հատուկ պետական հանձնաժողով: Կազմվել է միջոցառումների ծրագիր, որն իրականացնելու են ՀՀ մշակույթի, սփյուռքի նախարարությունները, ազգային ակադեմիան, ստեղծագործական տարբեր միություններ, բուհերը, կրթական այլ համակարգեր, այդ թվում նաեւ դպրոցները: Ծրագիրը բովանդակալից է եւ անցկացվելու է ամբողջ տարվա ընթացքում:

*«Հոբելյանի նշանակությունը շատ մեծ է, քանի որ Անին եզակի երեւույթ է ե՛ւ ճարտարապետական, ե՛ւ մշակութային առումներով: Մի շատ փոքր տարածքի վրա եղած 100-ից ավելի եկեղեցիները, որոնք բոլորն էլ ճարտարապետական հուշարձաններ են, դարերի ընթացքում զարմացրել է ե՛ւ այցելուներին, ե՛ւ մասնագետներին, ու ընդհանրապես հայ ժողովրդի կողմից քաղաքակրթության մեջ կատարած խոշոր ներդրումների շարքին է պատկանում Անին»,*–ասաց պրն Մարտիրոսյանը:

ՀՀ սփյուռքի նախարար **Հրանուշ Հակոբյանը** տեղեկացրեց, որ նախարարությունը ներկայացնում է հոբելյանական ֆիլմ եւ գիրք ոչ միայն հայերեն, այլեւ անգլերեն, եւ որ հոբելյանը տարբեր արարողակարգերով տոնվելու է ինչպես հայրենի կառույցներում, այնպես էլ սփյուռքի տարբեր գաղթօջախներում:



ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ԳԱԱ թղթակից–անդամ **Աշոտ Մելքոնյանը** նշեց, որ անցած ուսումնական տարվա ավարտից հետո դեպի Անի երկու ուխտագնացություն է տեղի ունեցել: Երեւանի պետական համալսարանի շուրջ 100 շրջանավարտներ՝ բակալավրեր եւ մագիստրոսներ, իրենց ավարտական վկայականները հուլիսի սկզբին ստացել են Անիում: Դա պատասխանն է այն բանի, որ անցյալ տարի թուրքական «Գորշ գայլեր» կազմակերպության ներկայացուցիչները սրբապղծել են Անին, տեղի հայկական եկեղեցում նամազ անելով:

Իսկ հուլիսի վերջերին Անիի մայր տաճարում վառվել է համահայկական հինգերորդ խաղերի կրակը, այն բերվել Երեւան եւ դարձել Վ. Սարգսյանի անվան մարզադաշտում այն կրակներից մեկը, որից օգոստոսի 13-ին բոցավառվել է գլխավոր ջահը:

Պրն Մելքոնյանը ներկաներին տեղեկացրեց նաեւ, որ Թուրքիան ՅՈՒՆԵՍԿՕ–ի կողմից գումարներ է ստացել Անին նորոգելու նպատակով, սակայն դա չի արել, յուրացրել է, քանի որ քաղաքն այսօր էլ աղետալի վիճակում է, նրա տարածքում տիրություն են անում արածող անասունները: Նա ասաց նաեւ, որ հայկական կողմին, ցավոք սրտի, չի հաջողվել մասնակցություն ունենալու Թուրքիայի տարածքի հայկական հուշարձանների նորոգմանը: Իսկ թուրքերը նորոգումն անում են անորակ, ըստ իրենց քմահաճույքի, որից եւ եկեղեցիները կարող են նույնիսկ ձեւափոխվել ու սելջուկյան հուշարձաններ հորջորջվել:

885թ. օգոստոսի 26-ը համարվում է Բագրատունյաց թագավորության հռչակման օրը: Այդ օրը՝ շուրջ 450-ամյա ընդմիջումից հետո, Աշոտ Ա Բագրատունին վերականգնեց հայոց թագավորությունը, որի ամենահայտնի մայրաքաղաքը հետագայում դարձավ Անին:

«Իմ Անի» ֆիլմում ներկայացվում է ինչպես քաղաքի պատմական փառավոր անցյալը, այնպես էլ ներկայիս անմխիթար վիճակն ու խաթարված կերպարը՝ ոչնչացման եզրին կանգնած իր հուշարձաններով ու ճարտարապետական կոթողների փլատակներով: Այս ֆիլմը հնարավորություն է ի լուր աշխարհի հնչեցնելու մշակութային եղեռնի մասին: Ֆիլմի պրոդյուսերը եւ ռեժիսորը Հայկ Հարությունյանն է, սցենարի հեղինակը՝ Թեհմինե Հայրումյանը, գիտական խորհրդատուն՝ Արտակ Մովսիսյանը, օպերատորներն են Հայկ Հարությունյանը եւ Նարեկ Մարտիրոսյանը, երաժշտությունը՝ Ասատուր Դեմիրճյանի:

Հոբելյանական միջոցառումները կշարունակվեն մինչեւ 2011թ. դեկտեմբերը: Ծրագրով նախատեսված են «Անին միջնադարյան Հայաստանի քաղաքական եւ քաղաքակրթական կենտրոն» միջազգային գիտաժողով, հոբելյանական ցուցադրություններ եւ հրատարակություններ:

*Վանիկ ՍԱՆԹՐՅԱՆ*